

կանապէս գիտէ գնահատել իւր անցեալի փառաւոր յիշատակները:

Ի.

**ՀԱՅ ԱՇԽԵՐԾԻ ԱՌԱՋԱՐԿԲ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ
400-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ**

Բազմիցս ինքս ուղեցել եմ այս նոյն խընդրի մասին գրիւ բայց յարմար առիթ չեմ ունեցել: Այսօր ես սահպուած եմ գրել և տպագրութեան 400-ամեակը տօնող յանձնաժողովի ուշադրութիւնը հրաւիրել: Առաջարկն արաւ իմ գիմնազիոնի երկրորդ դասարանի 11 տարեկան աշակերտը շատ կարճ ու ազդու կերպով, այնքան սրաալի, որ անմիջապէս տուն վերադառնալով խօսք տուի գրել այդ մասին: Հայոց լեզուից եմ պարապում, աշակերտս ուսւախօս է: Կարդում էր Դ. Աղայեանի Մայրինի լեզուի գասագիրը: Կարդալիս կանգ տուաւ յանկարծ և ինչ որ բաղաձայների կուտակումն արտասանեց: Հարցը ի՞նչ եղաւ և նայեցի ահսայ, որ աւ տառի տեղ ու է տպագրուած, երեխան կարդում է ուղիղ, ոչինչ միաք չի գուրս գալի: Երբ ուղիղցի սանս ասաց—Այս ինչիցն է, որ հայերէն գրերում յանախ տպագրական սխալներ են պատահում, կարծես ուսւաց կուրօնինի գրքոյիները լինին, ուր ճշլո գրւում է ըսով: Ի՞նչ ասէի: Երօր ամաչեցի այդ անմեզ մանկան տառշ, որը այնքան սրամիտ, այնքան տեղին նկատութիւն արաւ: Զգացի, ուր հայ աշակերտի բողոքը և տեղին էր և իրաւացի: Խօսք տուի միայն այդ մասին հոգալ: և ահա հայ տպագրութեան 400-ամեակի նախօրեակին կարծում եմ ամենից աւելի յարմար է այս մասին հոգալ:

Բացի այն, որ մեր մամուլում տպագրական բազմաթիւ սխալներ են պատահում, բացի այն, որ լնթերցանութեան գրքերում վրիպակներ կան միշտ, նոյնիսկ դասագրքերը զեղծ չեն այդ ցաւոտ երևոյթից, իսկ մանուկ սերունդը այնքան ձեռնահաս չէ, որ կարողանայ ուղիղն ըմբանել մտքից: Նա բառերի պաշար չունի և սխալ տպագրուած բառը նրա համար միտք ունի. Նա ուզում է այդ սխալ բառն էլ սովորել հէնց այլպէս, ինչպէս գրուած է:

Եթէ մաստմբ մեզաւորը գրաշաբն ու սըրբագրին են, որ անփոյթ են լինում և խիստ հսկողութիւն չեն ունենում, աւելի կարևոր իմ կարծիքով մեր տպագրական արդիականութիւնը գոյն է առաջարկութիւնը 400-ամեակի մեծ տօնի առթիւ: Հայերէն գեղեցիկ տասեր պատրաստելով, ահա այն առաջարկը, որ հայ մանուկն անում է իւր թոթովախօս բերնով, մաքուր հոգով:

մացութիւնն է, որ յատկապէս գասագրքերումն է երեսում իւր մոլորեցնող կողմերով:

Ճշմարիտ է, հայ տպագրութիւնը արդէն բոլորում է իւր գոյութիւն 400 տարին, բայց տպագրական արտեսուը մեզանում բաւական են է մնացել, եթէ համեմատելու լինենք Եւրոպական ազգերի տպագրական արտեսափի հետ: Յատկապէս մեր տասերը հիմնական մշակման չեն ենթարկուել և շատ շատերը լնթերցողներից մոլորութեան մէջ են լնկնում տ. ա. գ. շ. և այլ տասերի խիստ նման լինելուց: Մի երկու անգամ փորձ է եղել տասերի ձեր փոխելու, բայց անյաջող կարեոր է, որ այդ խնդիրը ուշադրութեան առնուի և հայերէն տասերի համար որպաշտի կանոնաւոր, պարզ ձևեր: Գիղեցիկ տպագրութիւնը և հաճելի է կարդալ և ուղիղ լնթերցանութեան, մտքի ճշգրիտ իւրացման է նպաստում: մինչդեռ մեզանում, յատկապէս Կովկասահայերիս մէջ գեղեցիկ տպագրութիւնը գրեթէ բացակայում է: Աւելորդ է խօսել տահասարակ տպագրական արտեսափի կատարելազործման նշանակութեան մասին, ես միայն ուզում եմ յօրելեանը տօնող յանձնաժողովի ուշադրութիւնը հրաւիրել այդ խիստ կարեոր խնդիրի վրայ:

Հայ աշակերտը ամենից աւելի իրաւունքու պահանջ ունի մեզանից մաքուր, սիրուն տպուած գասագրքեր պահանջելու, որովհետեւ նա տարիներ շարունակ միայն գրքի հետ գործ ունի և այն էլ այնպիսի գրքի, որի ամեն մի խօսքը սովորելու է, հասկանալու, որին իր ձեռքում է պահում ամբողջ տարի, եթէ ոչ աւելին:

Հայ աշակերտը պահանջում է տպագրական արտեսափի կատարելազործում և յանձնաժողովը պէտք է որպէս՝ ունենալ յատուկ նկարիչներ հայերէն գեղեցիկ, մաքուր և որոշ տասեր նկարելու, մայտերը պատրաստել տայ և այդ տասերով տպագրել տալ օրինակելի գրքեր: Աշակերտը հայ տպագրութեան զարգացման ամենանախանձախնդիր և անկեղծ շահագրգոււած անձն է: միաժամանակ և մեր տպագայ զարգացման հիմնաքարեր:

Տանք ուրիշն նրա պահանջին բաւարարութիւն հայ տպագրութեան 400-ամեակի մեծ տօնի առթիւ: Հայերէն գեղեցիկ տասեր պատրաստելով, ահա այն առաջարկը, որ հայ մանուկն անում է իւր թոթովախօս բերնով, մաքուր հոգով:

Pessimist



1182-66